

ԳԼՄԱՆ ՊԱՏՎԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Գնման պատվերի ընդունում (Լրացուցիչ պայմաններ առկա չեն). Սույն Գնման պատվերի Ընդհանուր պայմանների նպատակներից ելնելով «Մատակարար» եզրույթը նշանակում է համապատասխան Գնման պատվերում կամ ծառայությունների մատուցման պատվերում նշված Մատակարարը, Վաճառողը կամ Կապալառու, իսկ «Ընկերություն» եզրույթը՝ համապատասխան գնման պատվերում կամ ծառայությունների մատուցման պատվերում նշված ընկերությունը: Գնման պատվերը համարվում է Մատակարարի կողմից ընդունված, եթե ա) Մատակարարն իր համաձայնությունն է ներկայացնում Ընկերությանը, բ) եթե Մատակարարը սույն Գնման պատվերով սահմանված գործողություններ է կատարում կամ, գ) եթե սույն Գնման պատվերը ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում Մատակարարը գրավոր անամաձայնություն չի ներկայացնում Ընկերությանը: Մինչ Մատակարարի ընդունելը Ընկերությունն իրավունք ունի չեղարկել Գնման պատվերը՝ ամբողջապես կամ մասնակի: Սույն Գնման պատվերն ընդունելով Մատակարարը համաձայնում է հետևել վերջինիս և վերջինիս կից ներկայացված այլ փաստաթղթերի Ընդհանուր պայմաններին և սույնում նկարագրված կարգով և սահմանված գներով վաճառել ապրանքներ կամ արտադրանքներ («Ապրանքներ») և/կամ մատուցել ծառայություններ («Ծառայություններ»): Գնման պատվերի ընդունումը սահմանափակվում է բացառապես սույն Գնման պատվերում ներառված Ընդհանուր պայմանների (ներառյալ Գնման պատվերին կից ներկայացված փաստաթղթեր) ընդունումով: Որևէ Կողմի կողմից լրացուցիչ ներկայացված պայմանները, որոնք տարբեր են կամ չեն համապատասխանում սույն Գնման պատվերի պայմաններին, այդ թվում, բայց ոչ միայն, Մատակարարի ստանդարտ պայմանները և Մատակարարի ներկայացրած գնառջարկում, հաշիվ-ապրանքագրում, պատվերի հաստատման, ընդունման փաստաթղթում, կոնոսամենտում և այլ փաստաթղթերում ներառված պայմանները, պարտադիր չեն մյուս կողմի համար, եթե դրանք գրավոր կերպով հստակորեն չեն համաձայնեցվել և չեն ստորագրվել երկու կողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից:

2. ԱՌԱՔՈՒՄ, ԿՈՐՄՍԻ ՌԻՍԿԵՐ, ԶՆՆՈՒՄ. Մատակարարն Ապրանքերը և/կամ ծառայություններն առաքում է Գնման պատվերում նշված առաքման վայր («Առաքման վայր»)՝ նշված ժամկետում, եթե ժամկետը նշված չէ, ապա Գնման պատվերը ստանալուց հետո ողջամիտ ժամկետում: Մատակարարի կողմից Գնման պատվերի կատարման նպատակով ժամանակը համարվում է պարտադիր պայման: Ապրանքների կորստի ռիսկերը կրում է Մատակարարը, և սեփականության իրավունքը չի փոխանցվում Ընկերությանը մինչև Ապրանքները չեն առաքվել Առաքման վայր և չեն ընդունվել Ընկերության կողմից: Բոլոր Ապրանքները և/կամ ծառայությունները ենթակա են Ընկերության կողմից գնման և հաստատման: Մատակարարը պարտավոր է փաթեթավորել և պաշտպանել առաքման ենթակա Ապրանքները, այնպես որ վերջիններս համապատասխանեն բոլոր գործող օրենքներին, Ընկերության կողմից գրավոր ներկայացված Ընկերության քաղաքականություններին և միջազգային առաջնակարգ ստանդարտներին՝ հաշվի առնելով Առաքման կետ փոխադրման մեթոդները և ընթացիկ եղանակային պայմանները: Այն Ապրանքները, որոնք լավ վիճակում չեն, փաթեթավորված չեն Ընկերության քաղաքականություններին համապատասխան (եթե այդպիսիք կան), առաքման ընթացքում վնասվել են կամ անհամապատասխանության պատճառով Ընկերության կողմից մերժվել են, Ընկերության հայեցողությամբ պետք է վերադարձվեն Մատակարարին՝ Մատակարարի սեփական միջոցներով և ռիսկերով, և վերջիններս կարող են փոխարինվել միայն Ընկերության գրավոր լիազորմամբ:

3. ԳՆԵՐ, ՀԱՇԻՎ-ԱՊՐԱՆՔԱԳՐԵՐ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ. Մատակարարը պարտավորվում է Ապրանքները և Ծառայությունները մատակարարել Գնման պատվերում սահմանված գնով: Եթե Գնման պատվերում այլ բան սահմանված չէ, ապա Մատակարարը մատակարարված Ապրանքների և/կամ Ծառայությունների համար Գնման պատվերում սահմանված կարգով Ընկերությանը ներկայացնում է հաշիվ-ապրանքագիր: Հաշիվ-ապրանքագրում պետք է ցուցակագրվեն ձեռք բերված Ապրանքներն և/կամ Ծառայությունները, վերջիններիս գինը և ցանկացած գործող Անուղղակի հարկերն ու Բեռնափոխադրման ծախսերը (եթե Ընկերությունը համաձայնել է փոխհատուցել Բեռնափոխադրման ծախսերը): Զուտ վճարման պայմաններից ելնելով օրացուցային ամսվա առաջին օրվանից մինչև օրացուցային ամսվա վերջին օրը ընկած ժամանակահատվածում բոլոր հաշիվ-ապրանքագրերը կկուտակվեն Ընկերության կողմից («Կուտակման ժամանակահատված»): Ընկերությունը Գնման պատվերում նշված ժամկետում Մատակարարին վճարում է վճարման ենթակա անվիճելի գումարները: Սույն Գնման պատվերի Ընդհանուր պայմաններում «Կուտակման ժամանակահատվածի ավարտ» եզրույթը նշանակում է Ընկերության կողմից հաշիվ-ապրանքագրերի ստացման Կուտակման ժամանակահատվածի ավարտ: Այնուամենայնիվ, եթե Ընկերությունը հաշիվ-ապրանքագիրը ստանում է մինչև Ապրանքների առաքումը, ապա կիրառելի Կուտակման ժամանակահատվածը համարվում է այն ժամանակահատվածը, երբ Ապրանքները փաստացի մատակարարվել են Ընկերությանը: Հաշիվ-ապրանքագրի վճարումը (կամ Ընկերության կողմից վճարման հաստատումը) չի ենթադրում և չի փաստում այն մասին, որ Ապրանքները կամ Ծառայությունները համապատասխանում են Գնման պատվերի պահանջներին: Գնման պատվերում սահմանված գները ներառում են Ապրանքները և/կամ Ծառայություններն Առաքման կետ մատակարարելու Մատակարարի կրած բոլոր ծախսերը (ներառյալ հարկեր): Մատակարարը համաձայնում է սույն Գնման պատվերի կատարման առանձնությամբ հաշիվներ և արձանագրություններ պահել, ինչպես նաև համաձայնում է, որ Ընկերությունը կարող է Գնման պատվերով սահմանված Մատակարարի կատարած գործողությունների առանձնությամբ վերստուգումներ անցկացնել:

4. Հարկեր, Փոխադրման ծախսեր և Առաքային վճարներ. Գնման պատվերում սահմանված գները չեն ներառում Ապրանքների և/կամ Ծառայությունների մատակարարման առանձնությամբ վճարման ենթակա ավելացված արժեքի հարկ («ԱԱՀ»), վաճառքի, օգտագործման կամ սպառման կամ այլ նմանատիպ

հարկեր (ընդհանուր՝ «Անուղղակի հարկեր»): Եթե գործող օրենքներով Մատակարարից պահանջվում է համապատասխան պետական մարմիններին վճարել Անուղղակի հարկեր, ապա Ընկերությունը պարտավոր է կիրառվող Անուղղակի հարկի գումարը փոխանցել Մատակարարին՝ այն դրույքաչափով, որը պահանջվում է ըստ մատակարարման տարածքի իրավասության շրջանում գործող օրենքների, այն պարագայում եթե Մատակարարը Ընկերության ներկայացրել է Անուղղակի հարկի հաշիվ-ապրանքագիր, որը համապատասխանում է գործող օրենքներին: Ընկերությունը իրավունք ունի չեղարկել Անուղղակի հարկերի վճարումը, եթե վերջինս հարկումից ազատման մասին վավեր հավաստագիր է ներկայացրել Մատակարարին: Եթե Գնման պատվերով Մատակարարից պահանջվում է մատուցել Ծառայություններ, և եթե Մատակարարն արտասահմանյան ընկերություն է (այն է՝ փաստացի իրավաբանական հասցեն չի գտնվում Գնման պատվերում Ընկերության հասցեում նշված երկրում) կամ ոչ ռեզիդենտ օտարերկրացի, և եթե Մատակարարը չի ներկայացնում համապատասխան փաստաթուղթ ըստ որի հարկումից ազատում գործում է Ծառայությունների մատուցման տարածքում (մինչ Ծառայությունների դիմաց վճարելը ներկայացված), ապա ա) Ընկերությունը իրավունք ունի կասեցնել հարկերի համար անհրաժեշտ վճարումները՝ հրաժարվելով Ծառայությունների մատուցման առանչությամբ գործող օրենքներով պարտավորություններից, և բ) Ընկերությունը ողջամիտ ջանքեր է գործադրում Մատակարարին անդորագրեր, վճարման հավաստիքներ կամ այլ համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու համար: գ) Եթե Գնման պատվերով կամ վերջինիս որևէ հավելվածով այլ բան սահմանված չէ, ապա գները ներառում են Առաքման կետ Ապրանքների առաքման ծախսերը, այդ թվում՝ բոլոր փոխադրման և առաքման ծախսերն ու վճարները, սակագները կամ Ապրանքների ներկրման և արտահանման հետ կապված նմանատիպ անալոգ հարկեր («Մաքսային վճարներ»)՝ առանց սահմանափակման, և Մատակարարը պատասխանատվություն է կրում և վճարում է նշված գումարները: Մատակարարը Մաքսային վճարները նվազեցնելու նպատակով անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում:

5. ԵՐԱՇԽԻՔՆԵՐ. Մատակարարը երաշխիքներ է ներկայացնում առ այն, որ ա) վերջինս ունի Ապրանքների սեփականության իրավունք և առանց արգելանքի, հիփոթեքի, պահանջի կամ այլ գրավադրման պարտավորությունների Ապրանքների սեփականության իրավունքը փոխանցելու իրավունք: բ) Ապրանքները համապատասխանում են Ընկերության կողմից ներկայացված կամ Մատակարարի կողմից ներկայացված և Ընկերության կողմից հաստատված հատկորոշումներին և/կամ ստանդարտներին, և մատակարարվում են գործող օրենքներին համապատասխան, և չունեն նախագծման, նյութերի կամ որակական թերություններ, նշված երաշխիքը վավեր է կետ 2-ի համաձայն սեփականության իրավունքը Ընկերությանը փոխանցելու ժամկետին հաջորդող 18 ամսվա ընթացքում: գ) Ծայառությունները (եթե այդպիսիք կան) համապատասխանում են Ընկերության կողմից ներկայացված կամ Մատակարարի կողմից ներկայացված և Ընկերության կողմից հաստատված հատկորոշումներին և/կամ ստանդարտներին և գործող օրենքներին և իրականացվում են գործող ստանդարտներին համապատասխան և արագ կարգով, երաշխիքը վավեր է Ծառայությունների մատուցման ժամկետին հաջորդող 18 ամսվա ընթացքում: գ) Ապրանքները և Ծառայությունները (եթե այդպիսիք կան) և վերջիններիս օգտագործումը, արդյունաբերությունը, առքովաճաքը, վարձակալությունը, մատակարարումը կամ այլ առևտրային գործողություններ չեն խախտում և չեն խախտելու երրորդ կողմի հեղինակային իրավունքները և մտավոր սեփականության իրավունքներ, կամ չեն յուրացնում կամ չեն յուրացնելու երրորդ կողմի ապրանքանշանները, արտոնագրերը, առևտրային գաղտնիքները, և ե) Երաշխիքները համապատասխանում են բոլոր գործող տեղական, պետական, տարածաշրջանային օրենքներին և կանոնակարգերին: Վերոնշյալ երաշխիքներ գերազանցող երաշխիքներ առկա չեն: Սույնում ներկայացված Երաշխիքները հստակորեն սահմանված են և փոխարինում են այլ ուղղակի կամ անուղղակի կերպով ներկայացված երաշխիքներին և չեղարկում են գնայնության ու համապատասխանության անուղղակի երաշխիքները:

6. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ. Ի լրումն Ընկերությանը այլ կերպ հասանելի պաշտպանության միջոցներին, եթե Մատակարարը խախտում է Գնման պատվերի կետ 5(բ)-ով կամ կետ 5(գ)-ով սահմանված երաշխիքները, ապա Ընկերության հայեցողությամբ Մատակարարը իր միջոցներով (ներառյալ համապատասխան փոխադրման և աշխատուժի ծախսերը) պետք է փոխարինի կամ վերականգնի (անհրաժեշտության դեպքում վերատեղադրի) Ապրանքները կամ նորից տրամդրի Ծառայությունները՝ Ընկերության կողմից ընդունելի մակարդակով:

7. <http://www.lydianarmenia.am/corporate-governance/environmental-policy.html>; <http://www.lydianarmenia.am/corporate-governance/social-policy.html>; <http://www.lydianarmenia.am/corporate-governance/health-safety-policy.html>; և (գ) այնքանով, որքանով Մատակարարի աշխատակազմին անհրաժեշտ է մուտք գործել Ընկերության տեղամաս կամ սեփականության տարածք, ապահովել, որ Աշխատակազմը (i) հետևում է Ընկերության կողմից Մատակարարին գրավոր ներկայացված առողջության, անվտանգության և բնապահպանական քաղաքականություններին, և (ii) քաջատեղյակ է, որ մուտք է գործում Ընկերության տեղամաս կամ սեփականության տարածք իր սեփական ռիսկերով: Եթե Մատակարարը Ընկերության տեղամասում սույն Գնման պատվերով սահմանված Ծառայություններ է մատուցում, ապա վերջինս իր սեփական միջոցներով և Ընկերության պահանջով պետք է ներածական դասընթացներ անցկացնի մինչ Ընկերության տեղամաս մուտք գործել: **ՀԱՄԱՊԱՏԱՍՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՕՐԵՆՔՆԵՐԻՆ.** Մատակարարը Ապրանքները և Ծառայությունները (եթե այդպիսիք կան) մատակարարելիս պարտավոր է հետևել և ապահովել որ իր աշխատակիցները, գործակալները, կապալառուները և ենթակապալառուները («Անձնակազմ») ևս հետևեն գործող օրենքներին և կանոնակարգերին:

8. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ շՐՄԱՐՈՒՄ ԵՎ ԱԳԵԼԱՆՔԻՑ ԱՉՍՈՒՄ. 3-րդ Կետի համաձայն Ընկերությանը ներկայացված հաշիվ-ապրանքագրի գումարները ստանալուց հետո Մատակարարը հրաժարվում է բոլոր իրավունքներից, այդ թվում՝ գույքի վրա արգելանք դնելու իրավունքից, և իր միջոցներով

հրաժարվում է անշարժ գույքի գրավի կամ Հնկերության ակտիվների դեմ ներկայացված պահանջներից, որոնք առկա են կամ կարող են առաջ գալ Մատակարարված Ապրանքների կամ Ծառայությունների մատուցման համապատասխան հաշիվ-ապրանքագրի վճարման ժամկետից առաջ: Սույնով սահմանված Մատակարարին վճարման ենթակա գումարները համարվում են կոնտիզենտ, երբ Մատակարարն Հնկերության պահանջով վերջինիս ներկայացնում է սույն դրույթի հետ համապատասխանության ապացույց:

9. ԱՆՈՒՂՂԱԿԻ ՎՆԱՍԻ ԲԱՑԱՌՈՒՄ. Սույն Գնման պատվերի համաձայն Կողմերից ոչ ոք պատասխանատվություն չի կրում հատուկ, պատահական, անուղղակի, հետևանքային, տուգանքային վնասների և կորուստների, շահույթի և եկամտի կորստի, հնարավորությունների կորստի, հեղինակության կամ կապիտալի կորստի համար (ընդհանուր՝ «Անուղղակի կորուստ»), բացառությամբ՝ Կողմերից որևէ մեկի քրեական գործողությունների, խաբեության կամ միտումնավոր վատ վարքագծի հետևանքով առաջ եկած Անուղղակի վնասների կամ Մատակարարի կողմից պատճառված այն Անուղղակի վնասների, որոնք Մատակարարը պարտավոր էր ապահովագրվել 11-րդ կետի ապահովագրական պայմանագրի համաձայն:

10. ՓՈՒՆԶՍՈՒՑՈՒՄ. 9-րդ կետից ելնելով Մատակարարը համաձայնում է փոխհատուցել և Հնկերությանը և վերջինիս դուստր ձեռնարկություններին, և դրա/դրանց պաշտոնատար անձանց, տնօրեններին, աշխատողներին և գործակալներին գերծ պահել Մատակարարի կողմից Պայմանագրի խախտումից բխող ամեն տեսակ պահանջներից, կորուստներից, վնասներից (այդ թվում բայց ոչ միայն համապատասխան փաստաբանական վճարներ): Մատակարարը պարտավոր չէ սույն 10-րդ կետի համաձայն փոխհատուցել Հնկերությանը, եթե և այնքանով, որքանով համապատասխան պահանջը կամ պարտավորությունը պատճառվել են փոխհատուցվող կողմի կողմից, այնուամենայնիվ, ըստ գործող օրենքների սույն դրույթը Մատակարարին չի ազատում համապատասխան, համեմատական, օժանդակ կամ այլ պարտավորություններից կամ սխալներից բխող պարտավորություններից:

11. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Առանց Մատակարարի պարտավորությունները կամ պարտականությունները սահմանափակելու Մատակարարը իր սեփական միջոցներով Գնման պատվերի ընթացքում և համապատասխան երաշխիքների ժամանակահատվածում, ձեռք է բերում և պահում է հետևյալ ապահովագրական փաթեթները՝ ա) ընդհանուր ձեռնարկատիրական պատասխանատվության ապահովագրում, որը ներառում է Ծառայություններից/Ապրանքներից բխող գույքային կամ մարմնական վնասների ամբողջ պատասխանատվությունը, յուրաքանչյուր դեպքի համար և ընդհանուր՝ \$3,000,000 Բ) Ապրանքների/Ծառայությունների առանչությամբ աշխատողների փոխհատուցման ապահովագրում՝ համապատասխան տվյալ իրավասության շրջանում գործող օրենքների գ) Եթե Մատակարարը Ապրանքների մատակարարման և/կամ Ծառայությունների մատուցման համար օգտագործում է կամ օգտագործման համար տրամադրում է փոխադրամիջոցներ, ապա ավտոմեքենաների (փոխադրամիջոցների) ապահովագրում, որը ներառում է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով տուժած անձանց պատճառված գույքային և անձնական վնասները, յուրաքանչյուր դեպքի համար և ընդհանուր՝ \$2,000,000 դ) Եթե մատակարարը տրամադրելու է մասնագիտական խորհրդատվություն կամ ծառայություններ, ապա մասնագիտական պատասխանատվության ապահովագրում, յուրաքանչյուր դեպքի համար և ընդհանուր՝ \$2,000,000: Մատակարարը պետք է ապահովի ապահովագրության ընդլայնում ամեն կարգի ապահովագրության համար (բացառությամբ աշխատողների փոխհատուցման ապահովագրության և մասնագիտական ապահովագրության), այդ թվում՝ (i) ապահովագրության ընդլայնում՝ որպես հավելյալ ապահովադիր ներառելով Հնկերությանը և վերջինիս տնօրեններին, պաշտոնատար անձանց, աշխատողներին, գործակալներին և ներկայացուցիչներին, (ii) ապահովագրության ընդլայնում՝ ներառելով փոխադարձ պատասխանատվության դրույթ՝ հաշվի առնելով այն, որ ապահովադիր կողմերից յուրաքանչյուրը համարվում է անձնաձևին անձ և ապահովագրության պայմանագիրը վերաբերում են նրանցից յուրաքանչյուրին, և (iii) ապահովագրության ընդլայնում՝ հրաժարվելով բոլոր ուղղակի և անուղղակի սուբբոգացիայի իրավունքներից: Մատակարարը պարտավոր է Հնկերության կամ վերջինիս կողմից նշանակված անձի պահանջով վերջինիս ներկայացնել ապահովագրության կամ ապահովագրության ընդլայնման վկայական՝ որպես Գնման պատվերով պահանջվող ապահովագրության հավաստիք: Եթե Ապրանքների և/կամ Ծառայությունների որևէ մասի կատարման նպատակով Մատակարարը ներգրավում է այլ ենթակապալառուների, ապա Մատակարարը պետք է ապահովի որ նշված ենթակապալառուները ևս հետևեն 11-րդ կետի ապահովագրության պահանջներին:

12. ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Գնման պատվերի կատարման ընթացքում Մատակարարը և/կամ Հնկերությունը կարող են բանավոր կամ գրավոր կերպով (կամ այլ կերպ) ստանալ գաղտնի տեղեկություններ (կամ գաղտնի համարվող տեղեկություն) մյուս կողմի գործնետության, գործերի կամ գործողությունների վերաբերյալ: Եթե դատական կարգով, ծանուցագրով կամ այլ նմանատիպ իրավական պահանջով այլ բան չի պահանջվում, ապա Կողմերը համաձայնում են՝ ոչ մի կերպ չհրապարակել մյուս կողմի Գաղտնի տեղեկությունները երրորդ անձի (բացառությամբ՝ Հնկերության անձնակազմի և դուստր ձեռնարկությունների) կամ օգտագործել մյուս Կողմի Գաղտնի տեղեկությունները Գնման պատվերի իրականացումից բացի այլ նպատակներով: Այդ առումով, Մատակարարը հստակորեն գիտակցում է, որ Հնկերությանը Գաղտնի տեղեկություններ տրամադրելով, կամ Հնկերությանը մատակարարված Ապրանքներում Գաղտնի տեղեկություններ ներառելով, Մատակարարը Հնկերությանը լիազորում է օգտագործել նման տեղեկությունը Գնման պատվերում նշված գործողությունների նպատակներով, այդ թվում, բայց ոչ միայն՝ Գնման պատվերով սահմանված կարգով մատակարարված Ապրանքների հետագա օգտագործումը, վերանորոգումը, փոխարինումը: Կողմերը համաձայնում են անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել, որպեսզի վերջինիս աշխատակիցները չհրապարակեն կամ տրամադրեն գաղտնի տեղեկությունը երրորդ կողմի՝ խախտելով Գնման պատվերի պայմանները: Եթե ստացող կողմից պահանջվում է

հրապարակել գաղտնի տեղեկությունները դատական կարգով, դատական ծանուցագրով կամ նմանատիպ իրավական պահանջով, ապա ստացող կողմը պարտավոր է անմիջապես տրամադրող կողմին գրավոր ծանուցել ներկայացված պահանջի մասին, որպեսզի վերջինս կարողանա պաշտպանական միջոցներ ձեռք առնել: Յուրաքանչյուր կողմ գիտակցում է, որ սույն դրույթին չհետևելը կարող է անփոխհատուցելի վնաս հասցնել մյուս կողմին, և, որ կողմի սույն պարտավորությունների խախտման դեպքում մյուս կողմը իրավունք ունի անմիջապես դիմել դատական պաշտպանության, ի լրումն այլ պաշտպանական միջոցների:

13. ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. Եթե գնման պատվերը կատարելիս Մատակարարն Ընկերությանը տրամադրում է մտավոր սեփականություն, առևտրային գաղտնիքներ, արտադրանք, հեղինակային իրավունքի օբյեկտներ, տեխնիկական նյութեր, գծագրեր, մասնագրեր, փաստաթղթեր, հաշվետվություններ, խորհրդատվություն կամ այլ գրություններ, տեղեկություններ կամ նյութական արտահայտություն ունեցող նյութեր, որոնք ստեղծվել կամ մշակվել են Ապրանքների և/կամ Ծառայությունների տրամադրման արդյունքում (**«Գործնական արդյունքներ»**), ապա նման Գործնական արդյունքները համարվում են Ընկերության սեփականությունը, եթե գրավոր կերպով այլ բան սահմանված չէ: Գործող օրենքներով սահմանված կարգով Ընկերությունը համարվում է Գործնական արդյունքների «հեղինակ» և «սեփականատեր», և Մատակարարը համաձայնում է Ընկերությանը զիջել և զիջում է Գործնական արդյունքների մտավոր սեփականության իրավունքները: Եթե սույն Գնման պատվերով սահմանված կարգով Մատակարարը տրամադրում է Գործնական արդյունք չհանդիսացող մտավոր սեփականություն, ապա Մատակարարը Ընկերությանը և վերջինիս Աշխատակազմին տրամադրում է Ընկերության գործնական նպատակով Ապրանքների մտավոր սեփականության իրավունքից օգտվելու հարատև, ոչ-բացարձակ, փոխարինելի լիազորագիր:

14. ՑԱՆՑԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Գնման պատվերում սահմանված կարգով Մատակարարը պարտավոր է Ընկերությանը տրամադրել ցանցային ծառայություններ: Ցանցային ծառայությունների տրամադրումը մեկնարկում է Գնման պատվերում սահմանված ժամկետում և կթարմացվի Գնման պատվերում սահմանված կարգով: Եթե Գնման պատվերում հակառակը սահմանված չէ, ապա ցանցային ծառայությունները ընդգրկում են (i) Ընկերության հայտերին պատասխանելով ապահովել Ապրանքները համապատասխանությունը կիրառելի հատկորոշումներին, և (ii) ապահովել տեղեկատվական ծառայություն՝ աջակցելով լուծել խնդիրները և պատասխանել Ապրանքների հետ կապված հարցերին: 13-րդ կետից ելնելով մտավոր տրամադրվող Ցանցի սեփականության իրավունքը պատկանում է Մատակարարին:

15. ԳՆՄԱՆ ՊՍԿԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ. Ընկերությունը կամ Մատակարարը կարող են լուծել Գնման պատվերը՝ մյուս կողմին ներկայացնելով գրավոր ծանուցում, մյուս կողմի կողմից Գնման պատվերի խախտման պարագայում, որը չի շտվել գրավոր ծանուցումը ստանալուն հաջորդող 30 օրվա ընթացքում: Սույնի լուծումը չի սահմանափակում կողմերի վնասների առանչությամբ պահանջ ներկայացնելու կամ այլ իրավունքներ: Ընկերությունը կարող է կասեցնել կամ լուծել Գնման պատվերը, կամ վերջինիս որևէ մասը՝ գրավոր ծանուցելով Մատակարարին:

16. ՆԱԽԱՀԱՇՎԱՐԿՆԵՐ և ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ. Եթե և այնքանով, որքանով Ընկերության կողմից սույն Գնման պատվերում ներառված են Ապրանքների և/կամ Ծառայությունների ձեռք բերման վերաբերյալ նախահաշվարկներ, կանխատեսումներ, մոտավոր հաշվարկներ և պահանջներ, ապա Ընկերությունը և Մատակարարը համաձայնում են, որ այդպիսի նախահաշվարկներ, կանխատեսումներ, մոտավոր հաշվարկներ և պահանջներ՝ ա) գուտ նախահաշվարկներ են բ) երաշխավորված չեն և գ) Ընկերությանը Մատակարարից որևէ ծավալի կամ քանակի Ապրանքներ և/կամ Ծառայություններ ձեռք բերելու պարտավորություն չեն ստեղծում կամ ներկայացնում:

17. ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՔ. Գնման պատվերի համար կարգավորող օրենք է համարվում Գնման պատվերում Ընկերության հասցեում նշված երկրի կամ տարածաշրջանի օրենքները՝ բացառելով կոլիզիոն: Ընկերությունը և Մատակարարը հստակորեն հրաժարվում և բացառում են Գնման պատվերով առանչությամբ կիրառել ա) Ապրանքների միջազգային առուվաճառքի պայմանագրերի մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան բ) Ապրանքների միջազգային առուվաճառքի ակտը գ) Ապրանքների միջազգային առուվաճառքի պայմանագրերի կոնվենցիան: Յուրաքանչյուր կողմ Գնման պատվերի առանչությամբ ցանկացած վեճի լուծման նպատակով անվերապահորեն դիմում է դաշնային և/կամ պետական, տարածաշրջանային դատարաններին այն երկրում կամ տարածաշրջանում, որը նշված է Ընկերության հասցեում՝ Գնման պատվերում:

18. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ. Առանց Ընկերության գրավոր համաձայնության Մատակարարը չպետք է փոխանցի, պատվիրակի Գնման պատվերը կամ այլ շահեր, ինչպես նաև չպետք է ենթակապալի պայմանագիր կնքի Գնման պատվերի առանչությամբ, այդ թվում՝ որևէ աշխատանքի կատարման կամ վճարման ենթակա գումարի վճարման հետ կապված: Սույն Գնման պատվերով սահմանված որևէ պարտավորության փոխանցում, պատվիրակում կամ ենթակապալ չի ենթադրում Մատակարարի՝ Ապրանքների և/կամ Ծառայությունների տրամադրման առանչվող որևէ պարտականությունից կամ պարտավորությունից հրաժարում: Գնման պատվերը, այդ թվում սույն Գնման պատվերի Ընդհանուր պայմանները և Գնման պատվերում նշված կից փաստաթղթերը կազմում են սույն պայմանագիրը և փոխարինում են նախորդով բոլոր համաժամանակյա բանակցություններին կամ հաղորդագրություններին, եթե վերջիններս հստակորեն ներառված չեն սույնում: Եթե Գնման պատվերի սույն Ընդհանուր պայմանների և Գնման պատվերի այլ դրույթների (ներառյալ Գնման պատվերին կից փաստաթղթեր) միջև առկա է անհամապատասխանություն, ապա գերակա են համարվում սույն Գնման պատվերի պայմանները: Սույն պայմաններին փոփոխությունը պարտադիր չի համարվում քանի դեռ գրավոր կերպով չի համաձայնեցվել և չի ստորագրվել Ընկերության և Մատակարարի կողմից: Կողմերից յուրաքանչյուրի խախտումից հրաժարումը կամ Գնման պատվերի Ընդհանուր պայմանները չկիրառելը

նչ մի կերպ չի ազդում, սահմանափակում կամ ազատում տվյալ կողմի սույնի յուրքանչյուր պայմանին համապատասխանությունն ապահովելու պարտավորությունից: Եթե Գնման պատվերով սահմանված վճարման օրը ոչ աշխատանքային օր կամ տոն է, ապա վճարումը պետք է կատարել հաջորդող աշխատանքային օրը: Մատակարարը և Շնկերությունը համաձայնում են, որ Գնման պատվերի ընդհանուր դրույթները մշակվեն անգլերեն և հայերեն լեզվով: